ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/186

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.12.2018թ. թիվ 27/26-3/22249-18 գրությամբ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 02606482/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ՓԲԸ-ի 27.11.2018թ. գրության հիման վրա, 04.12.2018թ. նախաձեռնել է «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.11.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության արդյունքում «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող՝ մասնավորապես, «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,402,022 ՀՀ դրամի չափով»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին 26.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի 01.11.2018թ. «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել մասնակցելու «Արմենիկում» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և գնահատող հանձնաժողովի 05.11.2018 թվականի որոշմամբ 6-րդ, 9-րդ, 14-րդ, 38-րդ, 45-րդ, 46-րդ, 56-րդ, 57-րդ, 61-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող:

«Արմենիկում» ՓԲԸ-ի հարցման հիման վրա Պետական եկամուտների կոմիտեն տրամադրել է 01.11.2018 թվականի դրությամբ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք, որի համաձայն՝ Ընկերությունը 01.11.2018

թվականի դրությամբ ունեցել է 1,402,022 (մեկ միլիոն չորս հարյուր երկու հազար քսաներկու) դրամի ժամկետանց հարկային պարտավորություն եկամտային հարկի գծով, որից 1,391,586 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր ութսունվեց) դրամը հիմնական պարտքի գումար, իսկ 10,436 (տասը հազար չորս հարյուր երեսունվեց) դրամը որպես ժամկետանց հարկի գումարի վրա հաշվերգրված տույժ:

Նշված հանգամանքի հաշվառմամբ թիվ «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.11.18 թվականի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը 12.10.2018 թվականին հրապարակել է ԱԱՀ-ի վերաբերյալ հաշվետվություն:

Ընկերությունը 22.10.2018 թվականին թիվ 3976 վճարման հանձնարարականով պետական բյուջե է վճարել 1,391,586 դրամ՝ «վճարման նպատակ» դաշտում նշելով եկամտային հարկ: Այսինքն, Ընկերությունը հստակ նշել է, որ տվյալ գումարը վճարում է որպես եկամտային հարկի գումար:

Հարկային մարմինը, հիմք ընդունելով Հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասը, տվյալ գումարը գանձել է որպես ԱԱՀ-ի գումար, որի արդյունքում 01.11.2018 թվականի դրությամբ Ընկերությունն ունեցել է եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություն:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

Նույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ

առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները, իսկ հարկերի մարումները կատարելիս առաջնահերթորեն մարվում են նույն օրը ներկայացված հարկային հաշվարկներով ձևավորված այն հարկերի գծով պարտավորությունները, որոնց կատարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետն ավելի շուտ է լրանում:

Փաստորեն, ստացվում է, որ Ընկերության համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետն ավարտվում է 20.11.2018 թվականին, սակայն քանի որ ԱԱՀ-ի գծով հաշվետվությունն ավելի շուտ էր ներկայացվել, ուստի 22.10.2018 թվականին որպես եկամտային հարկի գումար վճարված 1391586 դրամը հաշվարկվել է որպես ԱԱՀ-ի գումար:

Դրա հետևանքով հարկային մարմնի տրամադրած տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 01.11.2018 թվականի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ եկամտային հարկի գծով, այն դեպքում, երբ փաստացի եկամտային հարկի գումարը վճարվել է, ուղղակի Հարկային օրենսգրքով նախատեսված հարկային պարտավորությունների մարման առաջնահերթություններին համապատասխան այդ գումարը գանձվել է որպես ԱԱՀ:

Ընկերությունը 19.11.2018 թվականին բողոք է ներկայացրել Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերացնել 01.11.2018 թվականի դրությամբ տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքը և տրամադրել 01.11.2018 թվականի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ նոր տեղեկանք:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել Պատվիրատուին դադարեցնելու Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և ընդունել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հետ 6-րդ, 9-րդ, 14-րդ, 38-րդ, 45-րդ, 46-րդ, 56-րդ, 57-րդ, 61-րդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու մասին որոշում»:

Ընկերությունը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի 26.11.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահի 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությունը, «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.11.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 2 և 20.11.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը«Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից 26.11.2018թ. ներկայացված բողոքը, ներկայացված բողոքի վերաբերյալ Բողոքներ քննող անձի 27.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/101 որոշումը.

Բողոքներ քննող անձը՝ քննելով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից 26.11.2018թ. ներկայացված բողոքը, 27.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/101 որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի:

Բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/101 որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

«1.«Արմենիկում» ՓԲԸ-ի կողմից «Արմենիկում» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով

էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 01.11.2018թ. հայտ է ներկայացրել «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Աճուրդի թիվ 6-րդ, 9-րդ, 14-րդ, 38-րդ, 45-րդ, 46-րդ, 56-րդ, 57-րդ, 61-րդ չափաբաժինների մասով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 13.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,402,022 ՀՀ դրամի չափով:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

5. «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.11.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 19.11.2018 թվականին բողոք է ներկայացրել Պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերացնել 01.11.2018 թվականի դրությամբ տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքը և տրամադրել 01.11.2018 թվականի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ նոր տեղեկանք:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով:

Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նկատի ունենալով, վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման պիլոտային ներդրումը, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելը, խնդրում ենք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 02606482) պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը չդիտարկել գնումների գործընթացին մասնակցության առումով որպես ժամկետանց պարտավորություն»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի 26.11.2018թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահի 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ

ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Արմենիկում» ՓԲԸ-ի կողմից «Արմենիկում» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 01.11.2018թ. հայտ է ներկայացրել «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 07.11.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ Աճուրդի թիվ 6-րդ, 9-րդ, 14-րդ, 38-րդ, 45-րդ, 46-րդ, 56-րդ, 57-րդ, 61-րդ չափաբաժինների մասով «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 13.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,402,022 ՀՀ դրամի չափով:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 19.11.2018թ. թիվ 5117 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 01.11.2018թ. դրությամբ ունի 1,402,022 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով պարտավորություն և 1,503,413 ՀՀ դրամի չափով ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ:

ԳԲԽ-ԱՄ-2018/101 բողոքի քննության նպատակով 30.11.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն 12.10.2018 թվականին հրապարակել է ԱԱՀ-ի վերաբերյալ հաշվետվություն:

Ընկերությունը 22.10.2018 թվականին թիվ 3976 վճարման հանձնարարականով պետական բյուջե է վճարել 1 391 586 դրամ՝ վճարման նպատակ դաշտում նշելով եկամտային հարկ: Այսինքն, Ընկերությունը հստակ նշել է, որ տվյալ գումարը վճարում է որպես եկամտային հարկի գումար:

Հարկային մարմինը, հիմք ընդունելով Հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասը, տվյալ գումարը գանձել է որպես ԱԱՀ-ի գումար, որի արդյունքում 01.11.2018 թվականի դրությամբ Ընկերությունն ունեցել է եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

Նույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո

հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները, իսկ հարկերի մարումները կատարելիս առաջնահերթորեն մարվում են նույն օրը ներկայացված հարկային հաշվարկներով ձևավորված այն հարկերի գծով պարտավորությունները, որոնց կատարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետն ավելի շուտ է լրանում:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Ընկերության համար ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետն ավարտվում է 20.11.2018 թվականին, սակայն քանի որ ԱԱՀ-ի գծով հաշվետվությունն ավելի շուտ էր ներկայացվել, ուստի 22.10.2018 թվականին որպես եկամտային հարկի գումար վճարված 1 391 586 դրամը հաշվարկվել է որպես ԱԱՀ-ի գումար:

Դրա հետևանքով հարկային մարմնի տրամադրած տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 01.11.2018 թվականի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ եկամտային հարկի գծով, այն դեպքում, երբ փաստացի եկամտային հարկի գումարը վճարվել է, ուղղակի Հարկային օրենսգրքով նախատեսված հարկային պարտավորությունների մարման առաջնահերթություններին համապատասխան այդ գումարը գանձվել է որպես ԱԱՀ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը տեղեկացրել է, որ վերը նշված խնդրի կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված Ընկերությունը 19.11.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերացնել 01.11.2018 թվականի դրությամբ տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքը և տրամադրել 01.11.2018 թվականի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ նոր տեղեկանք:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով:

Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նկատի ունենալով, վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման պիլոտային ներդրումը, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելը, խնդրում ենք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 02606482) պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը չդիտարկել գնումների գործընթացին մասնակցության առումով որպես ժամկետանց պարտավորություն»:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.11.2018թ. տրամադրված եզրակացությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի

19.11.2018թ. թիվ 5117 տեղեկանքը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահի 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությունը, գտնում եմ, որ «ԱՓԲԸ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.11.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրված «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը, որն ըստ էության հանդիսանում է եկամտային հարկի մասով պարտավորություն, տվյալ պայմաններում չի դիտարկվում որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն՝ հաշվի առնելով 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերության հայտը սույն հիմքով ենթակա չէ մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:»:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1,402,022 ՀՀ դրամի չափով:

- Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքի, Ընկերությունը 01.11.2018 թվականի դրությամբ ունեցել է 1,402,022 (մեկ միլիոն չորս հարյուր երկու հազար քսաներկու) դրամի ժամկետանց հարկային պարտավորություն եկամտային հարկի գծով, որից 1,391,586 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր ութսունվեց) դրամը հիմնական պարտքի գումար, իսկ 10,436 (տասը հազար չորս հարյուր երեսունվեց) դրամը որպես ժամկետանց հարկի գումարի վրա հաշվերգրված տույժ:

- Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշել է «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հայտը մերժել:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.11.2018թ. տրված թիվ 5117 տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 01.11.2018թ. դրությամբ ունեցել է 1,402,022 ՀՀ դրամ եկամտային հարկի գծով պարտավորություն և 1,503,413 ՀՀ դրամի չափով ներմուծման մասով ավելացված արժեքի հարկի մասով հարկային պարտավորություն, որի մարման վերջնաժամկետն է եղել 20.11.2018թ.:

- Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն 12.10.2018 թ. հրապարակել է ԱԱՀ-ի վերաբերյալ հաշվետվություն:

- Ընկերությունը 22.10.2018 թ. թիվ 3976 վճարման հանձնարարականով պետական բյուջե է վճարել 1,391,586 դրամ՝ որպես վճարման նպատակ նշելով եկամտային հարկի մարում:

- Հարկային մարմինը, հիմք ընդունելով Հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասը, տվյալ գումարը գանձել է որպես ԵԱՏՄ ներմուծման ԱԱՀ-ի հարկ, որի արդյունքում 01.11.2018 թվականի դրությամբ Ընկերության մոտ առաջացել է եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Ընկերությունը 19.11.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերացնել 01.11.2018 թվականի դրությամբ տրված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանքը և տրամադրել 01.11.2018թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության վերաբերյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ նոր տեղեկանք:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նախագահ Ռ. Մաշադյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին ուղղված 17.12.2018թ. թիվ 01.1/27-1/23444-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով:

Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նկատի ունենալով, վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման պիլոտային ներդրումը, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելը, խնդրում ենք «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 02606482) պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը չդիտարկել գնումների գործընթացին մասնակցության առումով որպես ժամկետանց պարտավորություն»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավությունն առաջացել է ոչ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ պայմանավորված է եղել ՀՀ հարկային մարմնի կողմից 2018թ. սկզբից ներդրված միասնական հարկային հաշվի նոր համակարգի աշխատանքի առանձնահատկություններով, ինչպես նաև հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքով: Ուստի, նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց

հարկային պարտավորությունների փաստի արձանագրումը չի կարող որակվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.12.2018թ. թիվ 27/26-3/22249-18 գրությամբ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 02606482/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ